ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1961 Общественные науки

Հ. Ռ. Մելիքսեթյան

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին հայ ժողովուրդս ապրեց իր պատմության մեջ ամենաահավոր ողբերգությունը։

Թուրքական իշխանությունները, օգտվելով արևմտյան տերությունների հովանավորությունից և թողտվությունից, ոչնչացրին ավելի քան մեկ միլիոն հայերի, դեպի արաբական անապատների ավազուտները քշեցին տասնյակ հազարավոր ծերերի, կանանց ու երեխաների, որոնցից շատերը գերեզման գտան այնտեղ։ Ոմանց հաջողվեց անցնել Սիրիայի և Եգիպտոսի քաղաքներն ու գյուղերը կամ ավելի հեռուն՝ Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա և այլ երկրներ, ուր նրանք տարիներ շարունակ անտուն ու անտեր դեգերում էին՝ ապարդյուն հույսեր տածելով, թե պատերազմը վերջանալուց և խաղաղություն վերականգնելուց հետո հնարավորություն կստանան վերադառնալու իրենց հայրենի օջախները։

Ավարտվեց պատերազմը, կնքվեցին հակասություններով ու անարդարություններով լի հաշտության պայմանագրերը։ Սակայն դրանից հետո էլ, ինչպես մյուս ազգությունների գաղթականների, այնպես էլ հայ տառապյալ պանդուխտների վիճակը երկար ժամանակ մնում էր անորոշության մեջ։

Հայ, հույն և այլազգի գաղթականների թշվառ կացությունը իրը թե բարելավելու նպատակով զբաղվում էր Վերսալի ծնունդ, իմպերիալիստական մեքենայությունների քողարկիչ Ազգերի լիգան։ Անհրաժեշտ է նշել, որ Ազգերի լիգան սփյուռքահայ գաղթականության հարցով ստիպված էր զբաղվելու հասարակական կարծիքի ճնշման տակ, իսկ իմպերիալիստական տերությունները նրա միջոցով ձգտում էին Հայաստանում ստանալ տնտեսական ձեռնարկներ և այդ ճանապարհով իրենց քաղաքական ազդեցության տակ առնել Սովետական Հայաստանը՝ խիստ հեռուն տանող նկատառումներով։

Սովետական կառավարությունը, հանուն օտարության մեջ տառապող աշխատավոր հայ գաղթականության հարցի շուտափույթ լուծման, ընդառաջելով Ազգերի լիգային, միաժամանակ ճշտորեն կռահեց իմպերիալիստական տերությունների իսկական նպատակները, ժամանակին հակահարված տվեց նրանց ստոր մեքենայություններին և կանխեց նրանց սպեկուլյատիվ հաշիվների իրականացումը։

Երկրի տնտեսական կյանքում ձեռք բերված նվաճումներին զուգընթաց, Սովետական կառավարությունն իր միջոցներով, առանց դրսի օգնության, իրականացրեց տասնյակ հազարավոր սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան։

Հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ այդ շրջանում կարևոր ջանքեր գործադրեց լիգայի գաղթականական գործերի կոմիսար, Նորվեգացի հայտնի բևեռախույզ, գիտնական և հասարակական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենը, որը մեծ համակրանքով վերաբերվեց Ռուսաստանում հաղթանակած

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիային և դարձավ սովետական ժողովրդի անկեղծ բարեկամը։

Նանսենի եռանդուն ջանքերը նպաստեցին Պովոլժյեում սովամահությունից փրկելու բազմաթիվ մարդկանց։ Սովետական ժողովուրդը շատ բարձր գնահատեց թշնամիներով շրջապատված երիտասարդ սոցիալիստական ռեսպուբլիկայի ծանր փորձությունների դաժան օրերին Նանսենի մատուցած օգնությունը։ Մոսկվայի քաղաքային Սովետը 1921 թ. նրան ընտրեց Մոսսովետի պատվավոր անդամ, իսկ Սովետների համառուսաստանյան IX համագումարը՝ պարգևատրեց պատվոգրով։

Ազգերի լիգայում իր վարած պաշտոնի բերումով Նանսենը մոտիկից ծանոթացավ նաև տարագիր հայ գաղթականությանն ու ընդհանրապես հայ ժողովրդի հետ և անկեղծորեն ձգտում էր օգնել նրան։ Սակայն Նանսենի հույսերը՝ Ազգերի լիգայի միջոցով հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ, չիրականացան, և նա, վերջում հասկանալով իր խաբվածությունը, մերկացրեց Ազգերի լիգայի ու իմպերիալիստական տերությունների երկերեսանի քաղաքականությունը։

Սույն հոդվածը մի փորձ է՝ լուսաբանելու հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ Ազգերի լիգայի երկդիմի գործունեությունը և այդ առնչությամբ՝ նաև Ֆրիտյոֆ Նանսենի վերաբերմունքը։

* * *

Դեռևս 1920 թ., Ազգերի լիգան իր առաջին նստաշրջանում անդրադառնալով հայ գաղթականության հարցին, հայտարարում է, թե անհրաժեշտ է, որ տերությունները միջոցներ ձեռնարկեն «ըստ կարելվույն շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգությանը» և ապահովեն այդ ժողովրդի ապագան[1]։

Անմիջապես համանման որոշումներ են կայացվում Ազգերի լիգայի հաջորդ նստաշրջաններում, միաժամանակ խնդիր դնելով, որ Սևրի պայմանագրի վերանայման ժամանակ, Թուրքիայի հետ բանակցելիս, առաջ քաշվի արևմտահայության մնացորդների համար ազգային օջախ ստեղծելու պահանջ[2]։ Այդ նպատակով Լոզանում դումարված կոնֆերանսում արևմտյան տերությունները, բավարարություն տալով իրենց շահերին ու ձգտումներին, գրեթե մոռացության տվին արևմտահայերին, և 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի դաշնագիրն արդեն մի խոսք անգամ չէր պարունակում հայերի համար որևէ օջախ ստեղծելու մասին։

Ինչպես եզրակացնում է Ֆր. Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում՝ այս էր վախճանն ազատության և անկախության այն խոստումների, որ արևմտաեվրոպական տերությունները և Ամերիկան առատորեն տվել էին հայ ժողովրդին, երբ հարկավոր էր Անտանտայի օգտին պատերազմին մասնակից դարձնելու համար քաջալերել նրան[3]։

Մինչ Ազգերի լիգայի և իմպերիալիստական դիվանագիտության այլ ամբիոններից շարունակում էին խաբել և սոսկ «սփոփանքի» խոսքեր շռայլել տարագիր հայ գաղթականությանը, նրա վիճակը գնալով ավելի էր վատանում։ Հայ գաղթականների մեծ մասը հապճեպ կերպով երկրից փախած ու

[1] Տե՛ս Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928, S. 330.
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

թուրքական սպանդից հաղիվ փրկված լինելով, զուրկ էր անդամ իր քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերից։ Միջազգային իրավունքի տեսակետից նրանք համարվում էին պարզապես հայրենազուրկներ և ոչ որևէ պետության քաղաքացի կամ հպատակ[4]։

1922 թ. հայկական «Ազգային պատվիրակությունը» Ազգերի լիգայի առաջ հարց է հարուցում, որ հայ գաղթականներին տրվեն «Նանսենյան» կոչվող անձնագրեր։

1923 թ. սեպտեմբերի 25-ին Ազգերի լիգայի խորհուրդը քննարկում է այդ խնդիրը և գտնում, որ «Լոզանի կոնֆերանսեն ի վեր հայոց խնդիրը իր բնույթը բոլորովին փոխած է։ Քաղաքականեն ելած և զուտ մարդասիրական հողի վրա դրված է։ Այլևս կապ չունի ան Թուրքիա բնակող հայերուն հետ, այլ հայոց խնդիր ըսելով պետք է հասկանալ հարցը այն գաղթականներուն, որոնք Թուրքիայեն դուրս կգտնվին և որոնց վիճակը կարելի չէ, որ անտարբեր թողու որևէ զգայուն սիրտ։

Ասոր վրա պետք է ավելացնել, որ դաշնակից պետությունները, որոնք հանձնարարություններ ունեին հայ ժողովրդի հանդեպ, բարոյապես պարտավոր են այսօր զբաղելու հայ գաղթականներուն վիճակով»[5]։

Ելնելով այդ դրությունից, Ազգերի լիգան որոշում է հանձնարարել Նանսենի կոմիտեին՝ հայ գաղթականների համար ևս նախապատրաստելու լիգայի հովանավորությունը վայելող միջազգային մասնավոր անձնագրեր[6]։

Նանսենի կոմիտեի ուսումնասիրությունների ընթացքում պարզվում է, որ ինքնության թղթերի կամ անձնագրերի կարիք ունեցող հայ տարագիրների մեծ մասը համաշխարհային պատերազմի օրերին, արևմտահայության զանգվածային գաղթի ժամանակ, առանց որևէ փաստաթղթի արտասահման ապաստանած քաղաքացիներն են, որոնց այլևս երկիր վերադառնալու արտոնություն չի տրվում Թուրքական իշխանությունների կողմից և չեն ճանաչվում Թուրքահպատակներ։ Ուստի հայ տարագիրների իրավական դրությունը կարգավորելու նպատակով Ազգերի լիգայի որոշումը՝ նրանց ևս «Նանսենյան ինքնության թղթեր» տալու մասին, կարելի էր նկատել որպես միակ հարմար ելքը։ Սակայն Ազգերի լիգայի կողմից երաշխավորվող այս ինքնության թղթերը երբեք հպատակության փոփոխություն չէին նշանակելու, «այլ առժամյա կարգադրություն մը, ի դյուրություն անտեր գաղթականներու»[7]։

Ազգերի լիգայի խորհուրդը, ելնելով 1923 թ. սեպտեմբերի իր համապատասխան բանաձևից, 1924 թ. հունիսի 12-ին որոշում է մի կոչով դիմել լիգայի անդամ բոլոր կառավարություններին, որպեսզի այսուհետև հայ տարագիրներին տան Նանսենյան կոմիտեի սահմանած նմուշի միջազգային անձնագրեր[8]։

Շուտով Ազգերի լիգայի մեջ մտնող բոլոր պետությունները, ինչպես նաև ոչ-անդամ այլ կառավարություններ, ընդունում են լիգայի անունից հայ տարագիրներին տրվող Նանսենյան անձնագրերի օրինականությունը։ Դրա շնորհիվ մի շարք երկրներում երկար տարիներ հազարավոր հայ գաղթականների

---

4 Տե՛ս «Միություն», ՀԲԸՄ երկամսյա պաշտոնաթերթ, Փարիզ, 1929, № 125, էջ 73—74։

5 «Վերջին լուր», օրաթերթ, Կ. Պոլիս, 8 հոկտեմբերի 1923, № 2923։

6 Նույն տեղում, 31 դեկտեմբերի 1923, № 2995։

7 Նույն տեղում, 21 հունվարի, 1924, № 3012։

8 Նույն տեղում, 23 հունիսի, 1924, № 3144։

քաղաքացիությունն ու իրավունքներն օրինական են ճանաչվում։ Նանսենյան անձնագրերը կարևոր նշանակություն ունեցան հատկապես Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի և ուրիշ երկրների հայ գաղթականների քաղաքացիական կացության կարգավորման համար։

Անկախ այն հանգամանքից, թե ով էր բարձրացրել և ով էր ընթացք ու լուծում տվել այդ հարցին, Նանսենյան անձնագրերը որոշ դրական նշանակություն ունեցան հայ տարագիրների արտասահմանյան թափառական կյանքը մասամբ թեթևացնելու իմաստով։ Այս առումով էլ դրվատանքի արժանի են այն մեծ ջանքերը և ջերմ հոգատարությունը, որ ցուցաբերեց Ֆրիտյոֆ Նանսենը հայ գաղթականներին իր անվան միջազգային ճանաչում ունեցող անձնագրերով ապահովելու ուղղությամբ։

* * *

Հայ գաղթականներին Նանսենյան անձնագրեր տալու հարցի քննարկման հետ միաժամանակ Ազգերի լիգայի նիստերում չորս-հինգ տարի շարունակ, ապարդյուն կերպով, հոլովվում էր նաև սփյուռքահայերի առավել ծանր դրության մեջ գտնվող և իր հաստատված երկրներից (Հունաստան, Բուլղարիա, Սիրիա, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայեր) դուրս մղվող մասի համար մի հաստատուն բնակավայր գտնելու հարցը։ 1923 թվականի աշնանը, անդրադառնալով այդ խնդրին, Ազգերի լիգան որոշում էր կայացրել՝ ուսումնասիրել մոտ 50 հազար հայ գաղթականների Անդրկովկասում, մասնավորապես Սովետական Հայաստանում տեղավորելու հնարավորությունը։ Սակայն այդ բոլոր որոշումներն էլ երկար ժամանակ մնում էին թղթի վրա, թեև այդ առթիվ Սովետական կառավարությունը հայտնել էր իր պատրաստակամությունը։

Ազգերի լիգայում եղած խոսակցություններից դատելով, կարելի էր հանգել այն մտքին, թե այդ 50 հազար հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու, նրանց Սովետական կառավարության կողմից առաջարկված ոռոգելի դարձվելիք Սարդարաբադի դաշտում տեղավորելու, ընակարաններով, գյուղատնտեսական գործիքներով, անասուններով ապահովելու և այլ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ է 4,7 միլիոն դոլար կամ 1 միլիոն ֆունտ ստեռլինգ։ Այդ գումարը ձեռք բերելու համար տարբեր առաջարկներ էին արվում։ Ազգերի լիգայի գաղթականական գործերի կոմիսար Ֆր. Նանսենն առաջարկում էր վերոհիշյալ գումարը ձեռք բերել կամ կառավարություններից խնդրելով, կամ մշակվելիք հողամասերից ստացվող եկամուտներով երաշխավորված երկարաժամկետ փոխառության միջոցով։ Փոխանակ այդ խնդրի լուծման մի հարմար եղանակ գտնելու, Ազգերի լիգան սահմանափակվում էր ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող բազմաթիվ անատամ որոշումներ ընդունելով միայն և փաստորեն տարեցտարի ձգձգում էր գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ փոխառության ձեռք բերման գոնե հնարավորությունը պարզելու հարցը[10]։ Վերջապես, 1924 թ. սեպտեմբերի 25-ին, Ազգերի լիգան ստանալով 50 հազար գաղթականների Կովկասում տեղավորելու առաջարկությունը, որոշում է հանձնարարել Աշ-

9 «Վերջին լուր», 1 հոկտեմբերի, 1923, № 2917։
10 Նույն տեղում, 8 հոկտեմբերի, 1923, № 2923։

խատանքի միջազգային բյուրոյին, Ֆրիտյոֆ Նանսենի ղեկավարությամբ ձեռնարկել Սովետական Հայաստանում մեծ թվով հայ գաղթականներ տեղավորելու հնարավորությունների ուսումնասիրությունը[11]։

Ազգերի լիգայի հանձնաժողովի Սովետական Հայաստան գալուն դրականապես են վերաբերվում ՀսմԿ(բ)Պ Կենտկոմը և Սովետական կառավարությունը, թեև մեծ հույսեր ու սպասելիքներ չունեին իմպերիալիստական դիվանագիտության կամակատար Ազգերի լիգայից[12]։

1925 թ. հունիսի 17-ին Երևան է ժամանում Ազգերի լիգայի Աշխատանքի միջազգային բյուրոյի կողմից ստեղծված հանձնաժողովը, որի կազմի մեջ, Նանսենից բացի, մտնում էին ֆրանսիացի ինժեներ-գյուղատնտես Ժ. Կարլը, ոռոգման աշխատանքների գծով ինժեներ անգլիացի Չարլզ Դյուպյուին և ոռոգման գծով ինժեներ՝ իտալացի Պիո Լո Սավիոն։ Հանձնաժողովի քարտուղար էր նշանակված նորվեգացի կապիտան Վիդկուն Քվիսլինգը[13]։ Նույն օրը Նանսենը և հանձնաժողովի մյուս անդամները այցելում են ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Սրապիոնյանին (Լուկաշին) և ապա Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանին, որոնք հավաստիացնում են նրանց, որ Սովետական կառավարության կողմից լայն հնարավորություններ կտրվեն հանձնաժողովին հետաքրքրող բոլոր հարցերը մանրամասնորեն ուսումնասիրելու համար, ինչպես նաև տեղում ծանոթանալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել երկիր ներգաղթող սփյուռքահայ աշխատավորներին։ Նույն օրվա երեկոյան Ասք. Մռավյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀՍԽՀ կառավարական հատուկ հանձնաժողովի (Ժողկոմխորհին առընթեր Աշխատավորական ներգաղթի հանձնաժողով) և Նանսենի հանձնաժողովի համատեղ նիստը, ուր Նանսենը հաղորդում է, որ վերջին շրջանում Հունաստանում, Թուրքիայում (Կ. Պոլսում), Սիրիայում և այլ երկրներում հայ գաղթականության վիճակը խիստ վատթարացել է և այդ կապակցությամբ իրենց նպատակն է ուսումնասիրել մոտավորապես 50,000 հայ տարագիրների Հայաստան տեղափոխելու հնարավորությունները։ Նանսենը նշում է, որ գաղութահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել Սովետական Հայաստան և ոչ ուրիշ վայրեր, հետևապես պետք է հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը։ Ելնելով այդ դրությունից, նիստում քննարկվում են գաղթականությանը Հայաստանում տեղավորելու հետ կապված ծրագրերը, մասնավորապես մանրամասն ուսումնասիրության առարկա են դառնում Սարդարաբադի և այլ հողամասերի ոռոգման ու ճահիճների չորացման նախագծերը[14]։

Մի երկու շաբաթվա ընթացքում Ֆրիտյոֆ Նանսենն ու նրա ուղեկիցները շրջում են Հայաստանում, ծանոթանում մեր երկրի կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, այցելում գյուղատնտեսական շրջաններն ու արդյունաբերական ձեռնարկությունները և հուլիսի կեսերին վերադառնում Եվրոպա։

Մեկնելուց առաջ, բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնության հիման վրա, Ֆր. Նանսենը ՀՍԽՀ կառավարությանը ներկայացնում է մի հուշագիր, որտեղ ամփոփված էին մոտ 50,000 հայ գաղթականների Հայաստանում տեղավորելու վերաբերյալ հիմնական միջոցառումները։ Իր

11 ՀՍՍՌ ՀՌՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 372, թ. 7։
12 Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 200։
13 «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 21 հունիսի 1925, № 140։
14 ՀՍՍՌ ՀՌՊԿԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 373, թ. 1—5։

հուշադրում Նանսենը հայտնում է, որ Արարատյան դաշտում ոռոգման և ճահիճների չորացման միջոցով նոր հողերի յուրացման նպատակով Հայաստանի կառավարության առաջադրած բոլոր նախագծերն էլ իրենք համարում են իրագործելի և ընդհանուր առմամբ հարմար, որ հայ գաղթականության խնդրի արմատական լուծման համար լավագույն եղանակը Սովետական կառավարության առաջադրած բոլոր նախագծերի իրագործումն ու Հայաստանի արդյունաբերական հնարավորությունների հետագա զարգացումն է։ Սակայն քանի որ իրենք դժվարանում են բավականաչափ միջոցներ կուտակել բոլոր նախագծերի միաժամանակյա ֆինանսավորման համար, ուստի նպատակահարմար են գտնում առայժմ մի կողմ թողնել Սարդարաբադի դաշտի ոռոգման պլանը և սկզբում սահմանափակվել ավելի քիչ ծախս պահանջող ծրագրերի իրագործման համար դրամի ձեռք բերումով։ Նանսենի կարծիքով դրանք էին՝ Երևանի մոտ գտնվող արևելյան և արևմտյան ղռերի ոռոգման ջրանցքի կառուցումը, որը պահանջում էր 2 միլիոն ռուբլի և ոռոգելու էր 19,000 դեսյատին տարածություն, Սև ջրի (Ղարասու) հովտի 10.000 դեսյատին տարածությամբ ճահիճների չորացումն ու ոռոգումը, որի համար անհրաժեշտ էր 1,5 միլիոն ռուբլի և, վերջապես, Զանգիբասարի շրջանի 4,000 դեսյատին տարածությամբ ճահիճների չորացումն ու ոռոգումը, որը պահանջում էր 600 հազար ռուբլի ներդրում[15]։

Այսպիսով, 33,000 դեսյատին տարածությամբ նոր հողերի յուրացման համար, նախնական հաշվումներով, պահանջվում էր 4,1 միլիոն ռուբլի։ Նանսենը այդ գումարին ավելացնում էր նաև 900 հազար ռուբլի ծախս՝ չնախատեսված աշխատանքների համար և 3 միլիոն ռուբլի՝ ներգաղթող տնտեսություններին այդ հողերի վրա տեղավորելու, բնակարաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ և այլն տրամադրելու համար։ Այսպիսով, ընդհանուր գումարը կկազմեր 8 միլիոն ռուբլի։

Անհրաժեշտ ծախսերի 8 միլիոն ռուբլի գումարը ձեռք բերելու համար, Նանսենի կարծիքով, գոյություն ունեին հիմնականում երեք ուղի։ Առաջինը՝ բարեգործական ընկերությունների կողմից հանգանակություն անցկացնելու, երկրորդը՝ եվրոպական պետություններից վարկի ձևով կամ որպես նպաստ ստանալու և երրորդը՝ եվրոպական բանկերից փոխառություն վերցնելու միջոցով։

Սակայն հենց ինքը՝ Նանսենը նշում է, որ առաջին երկու ուղիներն էլ դժվար իրագործելի են, որովհետև այդքան մեծ գումարն անհնար է բարեգործական հիմնարկների կազմակերպած հանգանակության կամ եվրոպական կառավարություններից վարկերի ու նպաստի ձևով ստանալը։ Հունաստանում գաղթականությանը տեղավորելու իր փորձից ելնելով, Նանսենը գտնում է, որ միակ նպատակահարմար ելքը անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին է, որովհետև այդ ավելի դյուրին է և որոշ չափով կախված է նաև Հայաստանի կառավարության վերաբերմունքից։ Ենթադրվում էր, որ փոխառությունը կլիներ երկարատև՝ 15—20 տարի ժամանակով, 10 տոկոսից ոչ ավելի շահով և ՍՍՌՄ ու ՀՍՍՌ կառավարությունների կողմից երաշխավորված։ Փոխառությունը պետք է բացառապես ծախսվեր ներգաղթողներին հատկացվելիք հողերի ոռոգման և ճահիճների չորացման, ինչպես

15 Նույն տեղում, թ. 6—7։

նաև նրանց տեղավորման ու բնակարաններով և այլ միջոցներով ապահովելու վրա, որի համար էլ Նանսենն առաջարկում է թույլատրել Հայաստանում ունենալու փոխատուների ներկայացուցիչների մի կոմիտե, փոխառության գումարների ծախսմանը հսկելու համար[16]։ Այդ կոմիտեն իրականում հանդիսանալու էր Սովետական Հայաստանում Ազգերի լիգայի քաղաքական վերահսկողությունն իրականացնող մի օրգան։

Համաձայնվելով Նանսենի առաջ քաշած գրեթե բոլոր պայմաններին, ՀՍԽՀ ԺողկոմխորՀի նորընտիր նախագահ Ս. Համբարձումյանը նշում է, որ Սովետական կառավարությունը երբեք չի կարող թույլատրել իր երկրում դրսի որևէ քաղաքական վերահսկողություն, ծայրահեղ դեպքում հնարավոր է միայն տնտեսական-տեխնիկական հսկողություն։ Ս. Համբարձումյանը Սովետական կառավարության անունից հայտարարում է, որ ինչպես ներգաղթող բոլոր մյուս աշխատավորները, այնպես էլ այդ 50.000 հայ տարագիրները Հայաստան տեղափոխվելիս կօգտվեն մի շարք արտոնություններից[17]։

Ստանալով այս հավաստիացումները, Նանսենը հույս է հայտնում, որ նշված բոլոր միջոցառումների իրականացման շնորհիվ կարելի է այդ վայրերում բնակեցնել մոտավորապես 25—30.000 մարդ, որոնք կլուծվի արտասահման ապաստանած հայ գաղթականության ամենադժվարին կացության մեջ գտնվողների հարցը։

Հայաստան կատարած ուղևորությունից վերադառնալուց հետո Նանսենը հանձնաժողովի ուսումնասիրությունների հիման վրա կազմված զեկուցումը ներկայացնում է Ազգերի լիգային։ Այդ զեկուցման հիմնական եզրակացությունը հանգում էր նրան, որ Սովետական Հայաստանում ընդարձակ հողամասերի ոռոգման և ճահիճների չորացման միջոցով սփյուռքահայ մոտ 50.000 գաղթականների համար հնարավոր ու նպատակահարմար է ստեղծել նոր բնակավայրեր։ Դրա համար անհրաժեշտ է Սովետական Հայաստանին տրամադրել 900 հազար ֆունտ ստեռլինգի փոխառություն։ Սփյուռքահայ գաղթականությանը Սովետական Հայաստանում տեղավորելու հետ կապված միջոցառումների այս ամբողջ պլանը հայտնի է «Նանսենյան ծրագիր» անունով[18]։

1925 թ. սեպտեմբերի 12-ին հանդես գալով Ազգերի լիգայի պլենար նիստում, Նանսենը մեծագույն գովասանքով է արտահայտվում Հայաստանի Սովետական կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի մի կառավարության, որի ընդունակությունները, եռանդն ու գործունեությունը և գաղթականության նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը առաջացրել են իր հիացմունքը։

Անդրադառնալով իր գլխավորած հանձնաժողովի Հայաստանից ստացած տպավորություններին և հիմնական եզրակացություններին, Նանսենը հայտարարում է. «Մենք քննեցինք բոլոր հնարավորությունները (հայ գաղթականների տեղավորման—Հ. Մ.) և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող մի մեծ մաս—շեշտում եմ մի մեծ մաս—կարող է տեղավորվել դա

16 Նույն տեղում, գ. 373, թ. 6—7։
17 Նույն տեղում, գ. 820, թ. 3—5։
18 Նույն տեղում։

Երևանի հայ հանրապետությունն է։ Եթե ժողովրդ մի բոպե անդրադառնար խնդրին՝ ես կարծում եմ, որ պետք է համաձայնի, որ մենք ճիշտ ենք»[19]։

Նանսենը նշում է, որ ներկայումս ուրիշ ոչ մի երկիր ու կառավարություն, բացի Սովետական Հայաստանից, չի համաձայնվում ընդունել գաղթականների նոր խմբեր, հազարավոր ու հազարավոր թափառական մարդկանց, կանանց ու երեխաների, որոնք փնտրում են հայրենիք ու ապրելու միջոցներ։

Նանսենը նշում է, որ «հայ գաղթականներն իրենք ցանկանում են գնալ Հայաստան և ոչ մի ուրիշ տեղ։ Նրանք ցանկանում են գնալ և կառուցել իրենց ազգային հայրենիքը (տունը)»[20]։

Ապա Նանսենը պատմում է Սովետական Հայաստանում իրենց կատարած ուսումնասիրությունների մասին և ասում, որ իրենք այնտեղ են գնացել խիստ երկյուղով, կասկածելով Սովետական կառավարության բարյացակամությանը, սակայն, վերադարձել են այն խորը համոզմունքով, որ Սովետական Հայաստանում ծավալված է հույժ կարևոր տնտեսական մի հանդուգն ծրագիր, որը խաղաղ աշխատանքի հոյակապ հնարավորություններ պիտի ընձեռի ոչ միայն արդեն Հայաստանի հողի վրա գտնվող հազարավոր գաղթականներին, այլև դեռևս աշխարհում թափառող մեծ թվով հայ տարագիրներին։

Այնուհետև Նանսենը նշում է, որ ոչ մի ժողովուրդ արդի պատմության մեջ չի տեսել որևէ բան, որը կարելի լինի բաղդատել հայ ժողովրդի քաշած տառապանքների հետ, այնուամենայնիվ վերջին մի քանի տարիների ընթացքում նա ուղղակի հրաշքներ է գործել զարգացնելով «թշվառության մեջ գտնվող երկիրն այն ժամանակ, երբ ամեն օր սայլերը մեռած երեխաներ և չափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»։ Խոսելով երկրի տնտեսական կյանքի օրավուր բարգավաճման կոնկրետ փաստերի մասին, Նանսենը հայտարարում է.

«... Իսկապես այս փոքրիկ հանրապետության մեջ գոյություն ունի վերջապես հայկական օջախը և ես խնդրում եմ նստաշրջանի անդամներին իրենց խղճի առաջ դնել այն հարցը, թե արդյոք նրանք անկեղծորեն և լրջորեն չեն հավատում, որ որևէ ուրիշ ազգային օջախ կարելի չէ հուսալ։

... Տարեցտարի մենք ազգային օջախի համար խոստումներ ենք արել։ տարեցտարի մենք ընդունել ենք լքված և վատ վերաբերմունքի արժանացած մի ժողովրդի արդարություն ապահովելու մեր կառավարությունների խոստումները և տարեցտարի մի երկար մարտիրոսության դանդաղ պատմության ականատես ենք հանդիսացել՝ մեր շրթունքների վրա ունենալով համակրանքի խոսքեր։ Ահա բացվում է մեր առաջ գործելու պատեհություն։ Ահա մի սխեմա (խոսքը ոռոգման և ճահիճների չորացման նախագծի մասին է—Հ. Մ.), մենք գիտենք, որը տնտեսապես առողջ է, ֆինանսապես գործնական և քաղաքականորեն՝ ցանկալի։

Եթե մենք միայն կարողանանք գլուխ բերել այս՝ ամոքած կլինենք անհամար գաղթականների տառապանքը։ Մենք պիտի օգնենք կառուցելու և հզորացնելու վերջին տարիների մեջ գոյություն ունեցող միակ հաստատունտևական հայկական կառավարությունը...»[21]։

---

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, թ. 17—18։

Նանսենը նշում է, որ եվրոպական տերությունները պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ողբերգության մեջ և այժմ անհրաժեշտ է, որ նրանք ձեռք առնեն միջոցներ անցյալի ձախողանքի ավերակների փոխարեն ստեղծելու ավելի պայծառ մի ապագա՝ ստնահարված մի ազգի համար։

Սեպտեմբերի 18-ին Նանսենի զեկուցումը քննարկվում է նաև լիգայի հինգերորդ հանձնաժողովում, ուր հայ գաղթականության տեղավորման վերաբերյալ ներկայացված ծրագրի հիմնավորմամբ ու պաշտպանությամբ հանդես են գալիս Ֆր. Նանսենը, Ալբերտ Թոման, Չարլզ Դյուպյուին և ուրիշներ։ Նանսենը պահանջում էր այդ ծրագրի իրականացմանը հատկացնել պատերազմի ժամանակ Թուրքիայից Ռեուլինի բանկում պահ տրված և զինադադարից հետո Անգլիայի կողմից բռնագրավված հինգ միլիոն ֆունտ ստեռլինգ գումարը։ Ծրագրի մանրամասն ուսումնասիրության նպատակով Նանսենի զեկուցումը հանձնվում է 9 հոգուց բաղկացած ենթակոմիտեին, ուր ծավալվում են գլխավոր ելույթները, որոնք բացահայտում են նախագծի նկատմամբ մեծ տերությունների իսկական վերաբերմունքը։ Մեծ Բրիտանիայի պատվիրակ լեդի Ատտոլը իր կառավարության անունից հայտարարում է, որ նա չի կարող ոչ իրացնել և ոչ էլ երաշխավորել որևէ սովետական ռեսպուբլիկայի բաց թողած փոխառությունը[22]։

Արտահայտելով ֆրանսիական կառավարության տեսակետը, նրա պատվիրակ Պամսը ասում է, թե իր երկիրը պատրաստ է երաշխավորել փոխառությունը, բայց այն անառարկելի պայմանով, որ Անգլիան ևս համաձայնվի համատեղ երաշխիքներ տալուն։ Իտալական պատվիրակը հայկական ներկայացուցիչներին և Ֆր. Նանսենին մասնավոր կերպով հայտնում է, որ նա այդ հարցում բաժանում է ֆրանսիական տեսակետը։ Անգլիական կառավարության այդպիսի անբարյացակամ դիրքը՝ հայ գաղթականների տեղավորման համար անհրաժեշտ փոխառության նկատմամբ, ինչպես արտահայտվում է Նանսենը, իր համար անսպասելի էր։ Փոխառության նախագծի կողմնակիցներն ու պաշտպանները ստիպված հետաձգում են ենթակոմիտեի աշխատանքները՝ մինչև փոխառության իրացման համար մի նոր հարմար եղանակ գտնելը, որով կարելի կլիներ համաձայնեցնել անգլիական պատվիրակությանը։

Հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման նպատակով պահանջվող փոխառության ձեռք բերումն ապահովելու համար Ֆր. Նանսենը, Ալ. Թոման, բելգիական ներկայացուցիչ Դեբրուկերը և Ազգերի լիգայի ֆրանսիական քարտուղարության շեֆ Արթուր Սոլտերը մասնավոր տեսակցություն են ունենում Փարիզում ՍՍՌՄ լիազոր-ներկայացուցչության քարտուղար Սիմոն Փիրումյանի հետ, որի ընթացքում փորձում են պարզել այն հարցը, թե Հայաստանի կառավարությունը փոխառության ապահովման ի՞նչ նոր առաջարկներ կարող է ներկայացնել, որոնք բավարար լինեին առանց անգլիական երաշխիքների այն իրացնելու համար, արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չէր համաձայնի նախատեսվող փոխառությունը երաշխավորել գրեթե մշտական բնույթ կրող նյութական պարտավորություններով (ոռոգվելիք հողերից ստացվող եկամուտները գրավ դնել և այլն)։

Ս. Փիրումյանը վճռական կերպով հայտարարում է, որ Սովետական կառավարությունը երբեք չի կարող ընթանալ այդպիսի երաշխիքներ տալու հա-

22 Նույն տեղում, գ. 454, թ. 206—207։

նապարհով: ԽՍՀՄ կառավարությունը համաձայնություն էր հայտնել ՀՍԽՀ անունից կնքել փոխառություն Մոսկվայի կենտրոնական բանկի երաշխավորությամբ, իսկ այլ կարգի պարտավորություններ, որոնք կարող էին խախտել Սովետական Հայաստանի սուվերենիտետը, Սովետական կառավարության համար միանգամայն անընդունելի են:

Ալբերտ Թոմանն և Նանսենը այնուհետև Ազգերի լիգայի անունից առաջարկում են ստեղծել մի ավտոնոմ կազմակերպություն, որը Հայաստանի կառավարությունից որոշակի պայմանագրային հիմունքներով կստանար Նանսենի ծրագրով նախատեսված հողամասերի ոռոգման ու գաղթականների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ հարաբերությունների մեջ կմտներ եվրոպական ֆինանսական շրջանների հետ՝ փոխառությունն իրացնելու համար։

Նրանք ենթադրում էին, որ այդ ավտոնոմ կազմակերպությունը կարող էր ստանալ այն երաշխիքը, որը Անգլիան չհամաձայնվեց տալ անմիջականորեն Սովետական Հայաստանի փոխառությանը։ Նանսենի կարծիքով դա կլիներ մարդասիրական բնույթի յուրահատուկ մի կոնցեսիա, որը կքողարկեր Հայաստանի կառավարության փոխառությունը[23]*։ Նանսենը հայտարարում է, որ եթե այդ կապակցությամբ շուտափույթ կերպով չկտնվի մի կոմպրոմիսային որոշում, ապա անգլիական դիմադրությունը կարող է գործը բոլորովին տապալել։ Սեպտեմբերի 23-ին տեղի է ունենում ենթակոմիտեի վերջին նիստը, ուր ընդունված բանաձևով նախատեսվում է Ազգերի լիգայի խորհրդի կողմից ստեղծել հինգ հոգուց բաղկացած մի օրգան, որը պետք է վերջնականապես պարզեր Նանսենի ծրագրի տեխնիկական իրագործելիության հնարավորությունները, բանակցություններ վարեր Հայաստանի և մյուս շահագրգռված կառավարությունների, կազմակերպությունների ու մասնավոր անձանց հետ և լիգայի խորհրդին ներկայացներ ինքնավար կազմակերպության ստեղծման մասին առաջարկներ*[24]*։*

Սեպտեմբերի 25-ին հայկական փոխառության հարցը ենթակոմիտեից նորից հանձնվում է Ազգերի լիգայի հինգերորդ հանձնաժողովին, ուր զեկուցումով հանդես է գալիս Բելգիայի ներկայացուցիչ Դեբրուկերը։ Ենթակոմիտեի ընդունած բանաձևի պաշտպանությանը նվիրված իր ճառում նա առաջարկում է մի կողմ դնել քաղաքական մոտիվները և օգնել օտարության մեջ դեռևս օթևան չգտած տարագիր հայության մի ստվար մասին՝ վերադառնալու իր հայրենիքը, հայրենիք, որն արդեն շատ բան է արել գաղթականությանը իր միջոցներով երկիր տեղափոխելու, իսկ այնտեղ գտնվող տասնյակ հազարավորներին հողով, բնակարաններով և այլ միջոցներով ապահովելու ուղղությամբ։

Արտասահմանի էմիգրանտական շրջաններում Դեբրուկերի ճառը խիստ տհաճությամբ է ընդունվում։ Կադետ-էմիգրանտ Աստրովը, այդ կապակցությամբ խորին վրդովմունք ու ցավակցություն հայտնելով իր հայ բախտակիցներին, ասում է, թե այդ բանաձևը ըստ էության ներկայացնում է «Սովետների փոխառության միջազգային հանձնարարական»[25]*։*

Ազգերի լիգայում արտասանված այդ բոլոր ճառերը, ինչպես և պետք էր սպասել, ոչ մի գործնական բան չեն անում հայ գաղթականության օգտին։

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, գ. 820, թ. 3—5։

25 Նույն տեղում, գ. 454, թ. 206—207։

Սակայն հայ գաղթականներին Սովետական Հայաստան փոխադրելու ուղղությամբ Սովետական կառավարության ունեցած ճիշտ դիրքավորումը բարձրացնում է նրա հեղինակությունը։ ՀՍԽՀ ԺողկոմխորհԻ ուղարկած իր զեկուցագրում Ս. Փիրումյանը նշում է, որ փոխառության հարցի հետ կապված այդ բոլոր խորհրդակցությունները, զեկուցումները ու ելույթները օբյեկտիվորեն մեծ դեր են խաղացել Սովետական Միության և Հայաստանի հեղինակության, կայունության, կազմակերպվածության, կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումների, ինչպես նաև ազգային հարցի լուծման դրական փորձի պրոպագանդման տեսակետից[26]։

Վերջապես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին, Ազգերի լիգայի խորհուրդը որոշում է ընտրել հայ գաղթականների տեղավորման հինգ հոգուց բաղկացած մի հանձնախումբ, որը պետք է պարզեր Նանսենի ծրագրի տեխնիկական կարելիությունը, կարծիքների փոխանակություն կատարեր Սովետական Հայաստանի կառավարության, Ազգերի լիգայի և ուրիշ կառավարությունների ու ընկերությունների հետ՝ փոխառության իրացման և վերահսկիչ օրգանի ստեղծման շուրջը։ Այդ հանձնախմբի որոշմամբ Երևան են գործուղվում ինժեներ Ուիլյամ Մակինտոշը և կապիտան Վիդկուն Քվիսլինգը, առաջինը՝ ոռոգման նախագծի վերջնական նախապատրաստությունն ավարտելու և պլանի տեխնիկական վիճակի մասին հանձնախմբին զեկուցելու, իսկ երկրորդը՝ կառավարության հետ փոխառության և այլ հարցերի շուրջը բանակցելու համար[27]։

Սովետական կառավարությունն բնդառաջում և նպաստում է նաև այս որոշման կատարմանը։ Կապիտան Քվիսլինգը չորս ամիս մնում է Երևանում, իսկ երկու ամիս էլ՝ Մոսկվայում և այդ ժամանակամիջոցում լիգային ուղարկում Հայաստանի ընդհանուր կացության, ֆինանսական ու տնտեսական դրության մասին մի քանի զեկուցագրեր։ Մակինտոշը հայ մասնագետների օգնությամբ Երևանում աշխատում է շուրջ վեց ամիս և նախատեսված ժամանակին ներկայացնում իր զեկուցումը՝ Նանսենի նախագծերի տեխնիկական հիմնավորմամբ[28]։

1926 թվականի մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը, որին ներկա է լինում նաև Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ՝ Ֆրանսիայում ՍՍՌՄ լիազոր-ներկայացուցչության քարտուղար Ս. Փիրումյանը։

Նախագահողը՝ ֆրանսիական սենատոր Ժ. Պամսը, իր ելույթում հաղորդում է, որ հանձնաժողովն ստացել է Հայաստան ուղարկված էքսպերտների զեկուցագրերը, որոնք լիովին հաստատում են Նանսենի ծրագրի իրագործելիությունը, ըստ որի հնարավոր է կարճ ժամանակամիջոցում ոռոգելի դարձնել 37,450 դեսյատին լավագույն հողամասեր, այնտեղ փոխադրել մեծ թվով հայ գաղթականների, սկզբնական շրջանում նյութապես ապահովել նրանց և օգնել կառուցելու բնակարաններ, ձեռք բերելու գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և այլն։ Այդ բոլոր միջոցառումների իրականացման համար պահանջվում է ընդամենը 15 միլիոն ռուբլի, այսինքն՝ նախնական ենթադրածից

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, թ. 161։

28 Տե՛ս «Նոր ուղի» ամսագիր, Երևան, 1929, № 1, էջ 342։

մոտ 5 միլիոն ռուբլիով ավելի[29]։ Այնուհետև Պամսբ հիշեցնում է, որ հանձնաժողովն սկզբում մտածում էր այդ գումարն ստանալ լիգայի անդամ պետությունների կողմից երաշխավորված փոխառության միջոցով, սակայն, այդպիսի երաշխիքներ տալուց անգլիական կառավարության հրաժարականից հետո (որին չքմեղանքով հետևեցին նաև ֆրանսիական ու իտալական կառավարությունները), հանձնաժողովը հնարավոր դտավ այդ փոխառության համար առաջադրել Ազգերի լիգայի երաշխավորությունը, առանց Սովետական Հայաստանի սուվերենիտետը խախտող պայմանների առաջ քաշման, բայց այդ էլ անհաջողությամբ վերջացավ։

Անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու խնդիրը այնուհետև կրկին քննարկվում է Ազգերի լիգայի հինգերորդ հանձնաժողովում, որի առաջարկությամբ լիգայի խորհուրդը որոշում է այդ նպատակն իրագործելու համար ստեղծել մի կոմիտե։ Միաժամանակ որոշվում է Ֆրիտյոֆ Նանսենին կամ նրա ներկայացուցչին վարկ տրամադրել՝ Եվրոպայում և Ամերիկայում հանդանակություն անցկացնելու հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով[30]։

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, Ազգերի լիգան «Հայկական հարցը» Եվրոպայի և Ամերիկայի իմպերիալիստական պետությունների խարդախությամբ, փոխարինում է գաղթականական հարցով, իսկ գաղթականության հայրենադարձությանը նպաստելու խնդիրն էլ՝ նրա օգտին հանգանակություն անցկանցելու կեղծ ձեռնարկով։

Հայ գաղթականության հարցի վերաբերյալ Ազգերի լիգայում ստեղծված այս երկարաձիգ քաշքշուկը մանրամասնորեն արտացոլվել է լիգայի կողմից 1927 թ. ժնևում ֆրանսերեն և անգլերեն հրատարակված «Հայ գաղթականության տեղավորման պլան» հավակնոտ վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի մեջ[31]։

Սովետական կառավարությունն անկեղծորեն մտահոգված լինելով բազմաչարչար հայ գաղթականության ճակատագրով, ամեն կերպ ընդառաջում էր տարագիր հայության հարցի լուծմանը, թեկուզ Ազգերի լիգայի միջոցով։ Սակայն միանգամայն պարզ ու որոշակի էր, որ ամեն անդամ, երբ հայ գաղթականների հարցը քննարկվում էր Ազգերի լիգայում, եվրոպական դիվանագետները պիղատոսյան արցունքներ էին թափում «դժբախտ ու չարչարված» հայ ժողովրդի կրած տառապանքների և անշուշտ նրան օգնելու անհրաժեշտության մասին, իսկ գործնականում շարունակում էին իրենց իմպերիալիստական քաղաքականությունը։

Այդ իմաստով խիստ բնորոշ է անգլիական իմպերիալիզմի սպասարկուների անպատկառ դերը։ 1924 թ. սեպտեմբերին, երբ Անգլիայում ընտրական պայքարի եռուն օրերն էին և անհրաժեշտ էր շահել ընտրողների համակրանքն ու քվեները, պահպանողական պարտիայի պարագլուխ Ստենլի

---

29 ՀՍՍՌ ՀԴԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 522, թ. 44—47։

30 «Նոր ուղի», 1929, № 1, էջ 342։

31 Այդ գիրքը՝ „Plan d'etablissement des refugies armeniens" կամ „Scheme for the settelement of Armenian Refugees. General Survey and Pricipal documents", Geneva, 1927, դժբախտաբար չգտնվեց Երևանի կամ Մոսկվայի գրադարաններում, ուստի մենք չկարողացանք մանրամասնորեն անդրադառնալ դրան։

Բոլդուինը և լիբերալ պարտիայի ղեկավար Հերբերտ Ասքվիտը պրեմիեր-մինիստր Ռամզեյ Մակդոնալդին հղում են մի երկերեսանի դիմում այն մասին, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը պարտավոր է անհապաղ մի նշանակալից գումար տրամադրել ի նպաստ հայ գաղթականների։ Իրենց այդ պահանջը նրանք հիմնավորում էին նրանով, որ հայերը, ոգևորված թուրքական լծից ազատագրվելու վերաբերյալ դաշնակիցների խոստումներով, համաշխարհային պատերազմի ընթացքում պաշտպանել են Անտանտային ու դրա հետևանքով շարաշար տուժել և գաղթականների արդի կացությունը անտանելի լինելով, ծանրանում է արևմտյան տերությունների վրա որպես նախատինք։ Նկատի ունենալով, որ 1916 թ. թուրքական կառավարության կողմից Բեոլինի բանկը մուծված և զինադադարից հետո դաշնակիցների կողմից գրավված 5 միլիոն ֆունտ ստեռլինգը մեծ մասամբ, թերևս բացառապես, հայերին պատկանող փող է եղել, նրանք առաջարկում էին գոնե այդ հատկացնել հայ գաղթականության կարիքներին։ Ապա դիմումի հեղինակները մատնանշում էին գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու իրենց պլանը և եզրակացնում, որ պետք է բրիտանական կառավարությունը, որպես փոխհատուցում ի դեմս հայերին ուղղված աներկբայելի խոստումների և չկատարված պարտավորությունների, առանց զլանալու անհապաղ մի նշանակալից գումար տրամադրի այդ նպատակին[32]։

Սակայն շուտով հենց այդ նույն Ստենլի Բոլդուինի կառավարության ներկայացուցիչը Ազգերի լիգայում 1925 թ. սեպտեմբերին հրաժարվեց տալ իր համաձայնությունը հայ գաղթականության օգտին փոխառություն բաց թողնելու առաջարկին, պատճառաբանելով, թե նա չի կարող երաշխավորել ՍՍՌՄ-ի կազմի մեջ մտնող որևէ ռեսպուբլիկայի փոխառությունը։ Միանգամայն պարզ է, որ իմպերիալիստների իսկական նպատակը հայ գաղթականությանն իր նոր, սոցիալիստական հայրենիքը վերադառնալու գործում օգնելը չէ, այլ այդ անվան տակ Սովետական Հայաստանը անմիջականորեն իրենց տնտեսական, ապա նաև քաղաքական ոլորտի մեջ առնելը։ Նրանք չէին ցանկանում գործ ունենալ անմիջականորեն Սովետական Միության կառավարության հետ, այլ մեկուսացված Հայաստանի հետ, որին, նրանց կարծիքով, հեշտ կլիներ ենթարկել իրենց ազդեցությանը։ Հենց այդտեղ էր, որ նրանք շարաշար սխալվում էին։ Բայց ամենախեղկատակային դերը խաղալու պատիվը վիճակված էր Ուինստոն Չերչիլին։ 1927 թ. հոկտեմբերի 30-ին Ազգերի լիգայի քարտուղարությունը մի կոչով դիմեց լիգայի անդամ երկրների կառավարություններին, առաջարկելով կատարել Եվրոպական և Բալկանյան երկրներում գտնվող հայ գաղթականների վերաբերյալ Նանսենյան ծրագրերի իրագործման առթիվ նույն տարվա սեպտեմբերյան նստաշրջանում ընդունված որոշումները։ Այդ կոչին առաջին արձագանքողը եղավ Ռումինիան, որը ցանկություն հայտնեց տրամադրել 1000 ֆունտ ստեռլինգ՝ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար։ Հունական կառավարությունը խոստացավ գաղթականությանը Հունաստանից Հայաստան տեղափոխելու ծախսերի 25 տոկոսը վերցնել իր վրա։ Իսկ Անգլիայի ֆինանսների մինիստր Ու. Չերչիլը հայտարարեց, թե անգլիական կառավարությունը չի կարող դրամական օժանդակություն ցույց տալ հայ փախստականներին Հայաստան տեղափոխելու համար այն

[32] Տե՛ս Fridtjof Nansen, Betrogenes Volk, Seite 332—333.

պատճառով, որ Հայաստանը չի վճարել անցած պատերազմի ժամանակ և նրանից անմիջապես հետո գոյացած իր պարտքը դաշնակիցներին։ Բուրժուական ֆինանսիստների հաշվումներով Հայաստանը, ավելի ճիշտ՝ դաշնակցական կառավարությունը, Անտանտային պարտք էր մնացել 18,750 հազար դոլար[33]։ Այդ գումարը գոյացել էր այն փշրանքների դիմաց, որ տվել էին Ամերիկան և Անգլիան՝ «զինելով» դաշնակցական զորամասերը և «ապահովելով» Հայաստանը կանադական փչացած ալյուրով։

Հայ ժողովրդի ճակատագրի, նրա ողբերգական անցյալի և պանդխտության մեջ տառապող գաղթականության դառն վիճակի հանդեպ ստոր ու դաժան այս խաղերը բոլորովին նորություն չէին։ Հայ ժողովուրդը դեռ տասնամյակներ առաջ իր մաշկի վրա զգացել էր գլադստոնների ու դիզրայելիների, ապա նաև լլոյդ ջորջերի ու լորդ քերզոնների «ազատագրելու», «օգնելու» մասին դատարկ խոսքերի ու կեղծ ճառերի արյունոտ հետևանքները։

Եվրոպայից հայ ժողովրդին «խոստացված» օգնությունը, ինչպես նաև Ազգերի լիգայի «բարեբարությունը» ըստ էության երբեմ էլ այդ փարիսեցիական խոսքերից ու ճառերից այն կողմ չանցավ։ Մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը և Նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո, Ազգերի լիգան այն մոռացության տվեց։

Եվ իզուր չէր, որ Սովետական կառավարությունը, Նանսենի միսիայի Հայաստան գալուց առաջ ու առավել ևս դրանից հետո, մեծ սպասելիքներ չուներ Ազգերի լիգայից, հույսեր չէր կապում նրա հետ։

Մեր երկրում Նանսենին, որպես առհասարակ Սովետական Միության և հայ ժողովրդի անկեղծ բարեկամի, միշտ էլ հարգանքով են վերաբերվել և երբեք չեն կասկածել նրա բարի տրամադրություններին ու ցանկություններին, սակայն հայ գաղթականության հարցի լուծման նրա միսիայից մեծ բան չեն սպասել, որովհետև նա չէր խնդիրը որոշողը, այլ Ազգերի լիգան։ Սովետական կառավարությունն ընդառաջելով Նանսենի հանձնաժողովին, նպատակ ուներ ցրել գաղութահայ աշխատավորության գիտակցության մեջ իշխող այն սին մոլորությունը, թե իբր մեծ տերությունները ու Ազգերի լիգան ցանկանում են լուծել տարագիր հայության հարցը։ Նանսենին տալով լայն հնարավորություններ, Սովետական կառավարությունը փակեց արտասահմանում գտնվող մեր հակառակորդների կողմից ներգաղթի առթիվ տարածվող պրովոկացիաների բոլոր աղբյուրները։

Դատապարտելով Ազգերի լիգայի երկերեսանի ու անճարակ վերաբերմունքը հայ գաղթականության հարցում, Սովետական կառավարությունը և ողջ հայ աշխատավորությունը միաժամանակ արժանին են հատուցել հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենին, որն ի հակադրություն Ազգերի լիգայի, ջերմ հոգատարություն էր ցուցաբերում դեպի հայ գաղթականության կարիքները։

Այցելելով մեր երկիրը և տեղում ծանոթանալով նրա աշխատասեր ժողովրդին ու դարավոր մշակույթին, Նանսենը իր ստացած անմիջական տպավորությունների ու մինչ այդ եվրոպական լեզուներով լույս տեսած աշխատությունների հիման վրա հետագայում գրեց իր «Խարված ժողովուրդ» գիրքը, որը, չնայած իր մեջ պարունակող ակնհայտ, բայց և անխուսափելի սխալներին, դեռևս երկար կմնա որպես հայ ժողովրդի պատմության, նրա ողբերգա-

33 Տե՛ս «Տեղեկատու», օրգան ՀՕԿ Կենտրոնական վարչության, Երևան, 1928, № 1, էջ 23։

կան, բայց և հերոսական անցյալի, ինչպես նաև լուսավոր ու պայծառ ապագայի մասին եվրոպացի ուսումնասիրողների տված ամենալավագույն գրքերից մեկը[34]։ Հեռանալով Հայաստանից, Նանսենը չմոռացավ հայ ժողովրդին, այլ իր գրած գրքով ցույց տվեց, որ նրա ցավերն ու հոգսերը շատ մոտ ու հասկանալի են իրեն։ Նրա գիրքը տալիս է հայոց պատմության վերաբերյալ մի համառոտ ու հետաքրքիր ակնարկ։ Առավել ուշագրավ են Նանսենի գրքի այն մասերը, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի քսանական թվականների առօրյային և հայ գաղթականության հարցին։ Այդ էջերում Նանսենը մեծ դրվատանքով նկարագրում է Սովետական իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտային ու Ազգերի լիգային, որոնք դրժելով բոլոր խոստումները, չկատարեցին իրենց հանձնառությունները հայ ժողովրդի հանդեպ։ Նանսենը պարզապես չի հասկանում, որ նրանք իրականում չէին էլ ցանկանում օգնել հայ գաղթականությանը, որ նրանք նպատակ ունեին ուղղակի իարել հասարակայնությանը։

Չնայած Ազգերի լիգայում հոգուտ հայ գաղթականների ծավալած իր բազմամյա եռանդուն գործունեությանը, Նանսենին չհաջողվեց նրանց ուրցի լուծման ուղղությամբ շատ քե միչ շոշափելի արդյունքների հասնել։ Եվ իմպերիալիստական մեքենայությունների հետևանքով Ազգերի լիգայում հայ գաղթականության խնդրի վերջնական տապալումից խայթված՝ Նանսենը նորվեգերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լույս ընծայեց իր գիրքը, որը, ինչպես դիպուկ կերպով ոեկլամել է գերմանական հրատարակիչը—«մեղադրական է Անտանտայի և Ազգերի լիգայի դեմ»[35]։

Նանսենը փաստորեն խաբվեց իր բարի մտադրությունների մեջ, Ազգերի լիգայից ակնկալած իր սպասելիքների մեջ։ Բայց խաբվելով հանդերձ, նա վրեժխնդիր եղավ իրեն խաբողներից՝ ի տես ամբողջ աշխարհի նրանց նկատմամբ բաց թողնելով մի վրիժառու կարիճ։

Այդ վրիժառու կարիճը նրա «Խաբված ժողովուրդ» գիրքն էր, որի մասին անգլիական «Թայմս» թերթը գրել է, թե նա «կարիճի պես իր պոչի մեջ խայթոց ունի, որ վիրավորում է հաճոյակատարությունը բոլոր նրանց, ովքեր խոստացան ավելին, քան ի վիճակի էին կատարելու»[36]։

Ֆր. Նանսենն իր գրքի վերջին էջերում սուր քննադատության է ենթարկում անգլիական կառավարությանն ու պետական գործիչներին, ինչպես նաև Ազգերի լիգային։ Մասնավորապես Ազգերի լիգայի մասին գրում է. «Ինչո՞ւ է Ազգերի լիգան հանձնաժողովներ նշանակում հարցն ուսումնասիրելու նպատակով, թե ինչ նվազագույն բան կարելի է անել հայրենազուրկ հայ գաղթականների համար։ Արդյո՞ք ոմանց անմաքուր խիղճը հանգստացնելու, իբր թե որևէ բան է արվո՞ւմ։

34 1929 թ. այդ գրքի մասին Պ. Մակինցյանը գրել է մի գրախոսական՝ «Նանսենի գործն ու գիրքը» վերնագրով (տե՛ս «Նոր ուղի», 1929, № 1, էջ 341—351), որտեղ անդրադարձել է հայ գաղթականության հարցի վերաբերյալ Ազգերի լիգայում Նանսենի ծավալած գործունեությանը, միաժամանակ թարգմանաբար մեջ բերել նրա գրքից առանձին կտորներ։ Այնուհետև, Նանսենի մահվան առթիվ, 1930 թ. «Նոր ուղի»-ում (№ 4—5, էջ 46—60) «Խաբված ժողովուրդ»-ից թարգմանված է, թեպետ խիստ պակասավոր, երկու հատված՝ «Շիրկանալի բացումը» և «Հայկական հարցն ու Անտանտան»։ Թեև այդ գրքի դրվելուց արդեն անցել է մի 35-ամյակ, այնուամենայնիվ, այն չի կորցրել հետաքրքրությունը։

35 «Նոր ուղի», 1929, № 1, էջ 350։

36 «Նոր ուղի» 1930, № 4—5, էջ 48։

Բայց ի՞նչ նպատակով, քանի որ եղելությանը լավատեղյակ և գործը հասկացողների բարեխիղճ ուսումնասիրությունների հետևանքով արված ու բոլորի կողմից ընդունված առաջարկությունները չարժանացան մեծ տերությունների պաշտպանությանը, որոնք սառնասրտորեն մերժեցին ամենափոքր զոհողություն օգնելու համար ողորմելի գաղթականներին, որոնց նկատմամբ նրանք հանձն էին առել այնքան ծանր պարտականություններ։ Այս հարցին պատասխանում են, թե չի կարելի զոհողություններ կատարել ուրիշի համար, երբ մարդիկ հազիվ-հազ իրենց ցավն են հոգում։ Բայց արդյոք ավելի լավ չէր լինի այդ մասին խորհել այն ժամանակ, երբ հաստատ խոստումների և պատվի անունով կոչ էր արվում այդ դժբախտներին՝ Անտանտայի գործի համար զոհաբերել ոչ միայն իրենց դրամը և ունեցվածքը, այլև իրենց կյանքը»[37]։

Այնուհետև Նանսենը վերլուծելով հայ գաղթականության հարցի շուրջը տեղի ունեցած անցուդարձը, եղած, բայց չիրականացված բազմաթիվ խոստումները, շվարած գրում է. «Մարդ տարակուսած հարցնում է, թե ի՞նչ էր իրոք այդ բոլորի նպատակը։ Արդյո՞ք այդ ամենը իսկապես դատարկ խոսքեր էին։ Դատարկ խոսքե՞ր, առանց լուրջ հիմքերի»։

Իմպերիալիստական տերությունները Ազգերի լիգայի միջոցով բարձրացնելով հայ գաղթականության հարցը, ցանկանում էին Սովետական Հայաստանում երկարատև ժամանակով իրենց ձեռքը գցել կարևոր տնտեսական դիրքեր և այնուհետև կախման մեջ գցելով Սովետական իշխանությանը, իրենց քաղաքական կամքը թելադրել նրան։ Սակայն, երբ Սովետական կառավարությունը կտրականապես մերժեց նրանց այդ պլանները և վճռական հակահարված տվեց նրանց մեքենայություններին, այն ժամանակ նրանք հրաժարվեցին որևէ բան անել հանուն հայ գաղթականության։ Հենց այս է, որ չի կարողացել ըմբռնել Ֆրիտյոֆ Նանսենը։ Ահա՛ թե ինչն էր իրոք այդ բոլորի նպատակը։

Նանսենը գտնում է, որ հայ գաղթականության հարցում Ազգերի լիգայի բռնած դիրքը ոչնչով չի տարբերվում մեծ տերությունների վերաբերմունքից և խիզախորեն բողոքում է Անտանտայի ու Ազգերի լիգայի դեմ, կրքոտ կերպով մերկացնում նրանց չարանենգ գործունեությունը։

«Վա՜յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական քաղաքականության մեջ։ Նրա համար ավելի լավ կլիներ, որ նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շուրթերին չլիներ։

Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց։ Մշտական, համառ աշխատանքում նա սպասում էր, սպասում երկար։ Նա սպասում է մինչև օրս էլ»[38],—այսպես է ավարտում իր գիրքը մեծ հումանիստը։

Այո, հայ ժողովուրդն սպասում էր, սպասում էր, բայց արդեն ոչ երբեք եվրոպական իմպերիալիստներից, այլ ռուսական հորիզոնում վեր բարձրացած կարմիր ու հրաբորբ դրոշից և Արարատի ստորոտում ծնունդ առած Հայաստանի անկախ ու սոցիալիստական պետությունից էր ակնկալում իր բաղձանքների իրականացումը։

Վերջնականապես համոզվելով, որ կապիտալիստական աշխարհը քարանտարբերությամբ է վերաբերվում հայ գաղթականության տառապանքնե-

---

[37] Fridtjof Nansen, Betrogenes Volk, Seite 331.

[38] Նույն տեղում, էջ 334։

րին, և այլևս չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի խաբել հայ տարագիրներին, Նանսենը 1929 թ. աշնանը առաջարկ է մտցնում լիգայի ընդհանուր ժողովին՝ դադարեցնել հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու վերաբերյալ ծրագրով անօգուտ կերպով զբաղվելու աշխատանքները։ Ազգերի լիգայի 1929 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ընդունվում է Նանսենի առաջարկը և 1924 թվականից ի վեր լիգայի օրակարգում անարդյունք կերպով արծարծված այդ հարցը լրվում է[39]։

Ինչպես ժամանակին ճիշտ կերպով նշվել է սովետահայ մամուլում, Նանսենի բոլոր ձեռնարկումները՝ օգնության հասնելու հայ գաղթականներին, «շարժելով Եվրոպայի և Ամերիկայի գութը», ջուրն ընկան։ Դա մի ավելորդ անգամ ապացուցեց, որ միանգամայն արդարացի է եղել Սովետական իշխանությունը՝ կապիտալիստական պետություններին և իմպերիալիստական դիվանագետներին նկատելով որպես հայ ժողովրդի բողարկված ու ամենաոխերիմ թշնամիների և թողնելով ուրիշներին ակնկալել նրանցից «բարիքներ»՝ հայ գաղթականության համար։

Օտարության մեջ դեգերող սփյուռքահայ աշխատավորների մի զգալի մասի հայրենադարձությունը իրականացվեց ոչ թե Ազգերի լիգայի միջոցով, որին հանուն հայ գաղթականության հարցի շուտափույթ լուծման, ամեն կերպ ընդառաջում էր Սովետական կառավարությունը, բայց որն իրականում ոչինչ չկարողացավ, կամ չցանկացավ պլուխ բերել, ոչ թե իմպերիալիստական կառավարությունների օգնությամբ, որոնք ուղղակի պատասխանատվություն էին կրում հայ գաղթականության աննախանձելի վիճակի հանդեպ, այլ Սովետական կառավարության գործադրած ջանքերի և դեպի իրենց սփյուռքահայ եղբայրները Սովետական Հայաստանի աշխատավորների ունեցած ջերմ հոգատարության, կարեկցանքի ու հանուն նրանց կատարած զոհողությունների շնորհիվ։

Հայաստանում իր կատարած ուղևորությունների ժամանակ ներկա գտնվելով Շիրակի ջրանցքի բացման արարողություններին և տեսնելով հայ աշխատավորության խանդավառությունն ու ոգևորությունը, Նանսենը գրում էր, որ Հայաստանում «մեր տեսածները մեզ համոզել են, որ այս ժողովուրդը, եթե տևական խաղաղություն ունենա, ընդունակ է շահագործելու բոլոր հարստությունները, որոնցով առատ է երկիրը և շուտով ստեղծելու նոր օջախներ՝ հազարավոր բախտավոր ընտանիքների համար։ Հայ ժողովուրդը կվաստակի ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը, եթե այսպիսով նա կարողանա ստեղծել մի օջախ ոչ միայն գաղթական հայերի համար, այլև մի ազգային օջախ, որը ամբողջ աշխարհում ցիր ու ցան հայերի կողմից համարվի իսկական հայրենիք»[40]։

Սովետական Հայաստանի իրականությանը և սփյուռքահայ աշխատավորների տրամադրություններին շատ թե քիչ ծանոթ ոչ մի մարդ այժմ չի կարող ժխտել, որ Սովետական իշխանության փառապանծ 40-ամյակի ընթացքում, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Հայաստանը իրոք դարձել է մի ազգային օջախ, որին աշ-

---

[39] Տե՛ս «Միութ. ոնտ», 1929, № 135, էջ 237։

[40] Fridtjof Nansen, Betrogenes Volk, seite 173, տե՛ս նաև՝ «Նոր ուղի», 1930, № 4—5, էջ 56։

խարհում դեռևս ցիր ու ցան մնացած հայ աշխատավորները համարում են իրենց իսկական Հայրենիքը։

Հայաստանում Սովետական իշխանության գոյության տարիներին սոցիալիստական կյանքի ուղին բռնեցին ոչ միայն երկրում գտնվող հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներ, այլև Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ջանքերով հայրենիք վերադարձան տասնյակ հազարավոր սփյուռքահայ աշխատավորներ ու դեռ կգան նորանոր խմբեր։